ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2016 թվականի **թիվ 25** քաղ. Մոսկվա

Գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը սահմանելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Սահմանել գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված)՝ համաձայն հավելվածի:

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ծանոթագրությունները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 68Դ - 70Դ ծանոթագրություններով՝

«68Դ) Մաքսային արժեքի 5 %-ի չափով ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մարտի 22-ի թիվ 25 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2017 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

69Դ) Մաքսային արժեքի 5 %-ի չափով ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մարտի 22-ի թիվ 25 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ:

70Դ) Մաքսային արժեքի 0 (զրո) % -ի չափով ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մարտի 22-ի թիվ 25 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2019 թվականի մայիսի 31-ը ներառյալ:»:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի 2016 թվականի մարտի 22-ի
թիվ 25 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (մաքսային արժեքից տոկոսներով՝ կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
0704 10 000 0	- ծաղկակաղամբ եւ բրոկոլի	11[68Դ)]
0704 20 000 0	- բրյուսելյան կաղամբ	13[69Դ)]
0802 51 000 0	-- կճեպով	5[70Դ)]
0802 52 000 0	-- կճեպից մաքրած	5[70Դ)]
0804 10 000 0	- արմավ	5[70Դ)]
0806 20 100 0	-- կորինկա	5[70Դ)]
0806 20 300 0	-- սուլթանա	5[70Դ)]
0806 20 900 0	– – այլ	5[70Դ)]

_____